ՀՈՒՇԱԹԵՐԹ

«ԹՈՒՆԱՔԻՄԻԿԱՏՆԵՐՈՎ ԹՈՒՆԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՈՒՄ»

I. Ինչ է թունաքիմիկատը

1. **Թունաքիմիկատը** թունավոր նյութ է, որը նախատեսված է վնասակար օրգանիզմների, օր.՝ մոլախոտերի, կրծողների, սնկերի, վնասատու միջատների ոչնչացման համար: «Գյուղատնտեսական թունաքիմիկատ»-ը ներառում է վնասատուների դեմ պայքարի նպատակով օգտագործվող մի շարք նյութեր, այդ թվում միջատասպան, մոլախոտասպան, սնկասպան և մկնասպան պատրաստուկներ:

II. Ինչպես պաշտպանվել թունաքիմիկատի վնասակար ազդեցությունից

2. **Թունաքիմիկատներ գնելիս՝**

1) **Հետևե՛ք** թունաքիմիկատի օգտագործման, անվտանգ չափաքանակների և առաջին օգնության միջոցառումների վերաբերյալ հրահանգներին, որոնք նշված են պիտակի վրա,
2) **Մի՛ գնեք** թունաքիմիկատներ, որոնց պիտակները բացակայում են կամ գրված են Ձեզ համար անհասկանալի լեզվով

3. **Թունաքիմիկատը Ձեր օրգանիզմ կարող է ներթափանցել 3 ուղիներով՝**

1) **Ընչառական ուղիներով՝**

ա) վատ օդափոխվող տարածքներում թունաքիմիկատի խառնուրդ պատրաստելիս բ) վատ օդափոխվող տարածքներում թունաքիմիկատներով մշակված բույսերի հետ աշխատելիս (օրինակ՝ ջերմոցներում)

գ) առանց անհատական պաշտպանիչ միջոցների կիրառման թունաքիմիկատով մշակում կատարելիս

2) **Մաշկի միջոցով՝**

ա) թունաքիմիկատների խառնուրդ պատրաստելիս կամ դրա կիրառման ժամանա՝ մաշկի վրա թունաքիմիկատի թափվելու դեպքում

գ) թունաքիմիկատով աղտոտված մակերեսների, գործիքների կամ մշակաբույսերի հետ շփման դեպքում

դ) աղտոտված հագուստ օգտագործելու դեպքում

3) **Մարսողական համակարգի միջոցով՝**

ա) թունաքիմիկատների հետ աշխատանքի ժամանակ սնունդ ընդունելու, ըպելիք օգտագործելու կամ ծխելու ժամանակ

բ) թունաքիմիկատով աղտոտված մակերեսներին դիպչելու և դրանից հետո չլվացվելու հետևանքով

8) **Մի՛ օգտագործեք** թունաքիմիկատներ, որոնք թույլատրված չեն մշակաբույսերի պաշտպանության նպատակով օգտագործման համար

9) **Պահպանե՛ք** մշակումից հետո թունաքիմիկատի համար նախատեսված սպասման ժամկետը՝ դաշտ մտնելիս և թունաքիմիկատով մշակցած մթերք օգտագործելիս:

6. **Թունաքիմիկատներ օգտագործելիս ձեռնարկեք պաշտպանական միջոցներ՝**

1) **Չի՛ թույլատրվում** թունաքիմիկատներով մշակումը իրականացնել քամոտ, մառախլապատ եղանակին կամ քամու հակառակ ուղղությամբ

2) Թունաքիմիկատի խառնուրդ պատրաստեք լավ օդափոխվող տարածքում

3) Թունաքիմիկատի հետ աշխատելիս օգտագործեք անհատական պաշտպանիչ միջոցներ (դիմակ, ձեռնոց, ակնոց և այլն)

4) **Մի՛ փչեք** հեղուկացրի (սրսկիչ սարքի) խցանցած ծայրոցի մեջ

5) Թունաքիմիկատի օգտագործումից հետո՝ նախքան սնունդ ընդունելը, ծխելը կամ սանհանգույցից օգտվելը օճառով **լվացե՛ք** ձեռքերը և դեմքը

6) Աղտոտված մաշկը և հագուստը **լվացե՛ք** առատ ջրով և օճառով

7) **Մի՛ օգտագործեք** կաթացող կամ այլ թերություններ ունեցող սարքավորումներ

ՀԵՏԵՎԵ՛Ք ՄԵՐ ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐԻՆ, ԵՂԵՔ ԱՌՈՂՋ

ՀՀ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ